Հենրիկ Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՆԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ 1980-1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բանալի բառեր – Անկախություն, հանրապետություն, ազատություն, քվեարկություն, ընտրություն, կուսակցություն, մարտահրավեր, միացում, համաշխարայնացում, սերտաճում:

Խորհրդային Միության փլուզման և նրա հիմքի վրա առաջացած նորանկախ պետությունների, այդ թվում նաև Հայաստանի երրորդ Հանրապետության պատմության ուսումնասիրումն ունի պատմագիտական, տեսական և գիտագործնական կարևոր նշանակություն:

Անկախության ավելի քան քառորդ դարի ընթացքում Հայաստանի Հանրապետությունը 1995 թվականին համաժողավրդական քվեարկությամբ ընդունեց նոր սահմանադրություն, որը 2005 և 2015 թվականներին կրկին համաժողովրդական քվեարկությամբ ենթարկվեց փոփոխությունների՝ անցնելով կառավարման նախագահական համակարգից խորհրդարանական համակարգի:

Այդ իմաստով հայ պատմագիտության ներկա ժամանակաշրջանի թերևս ամենաարդիական խնդիրներից մեկը Հայաստանի երրորդ Հանարապետության պատմության ուսումնասիրումն է, նախորդ պատմությունից դասեր քաղելը և, որ կարևոր է, այդ ամենից ճիշտ հետևություններ անելը, երկրի զարգացման համար նորմալ պայմաններ ստեղծելը: Միաժամանակ ժամանակակից աշխարհի անընդհատ, հարահոս փոփոխվող նոր մարտահրավերներին դիմակայելու, պետությունների միջև տեղի ունեցող հախուռն սերտաճմանը (ինտեգրում) կուլ չգնալու և սեփական դիմագիծը, ինքնությունը պահպանելու համար անհրաժեշտ էր մշակել երկրի զարգացման նոր ռազմավարություն, որը համաշխարայնացման (գլոբալացում) նոր պայմաններում միակ հուսալի և կարևոր գործոնն է հասարակության առաջընթացն ապահովելու համար:

Երկար տասնամյակներ հայ ժողովուրդը բազմաթիվ ժողովուրդների հետ միասին եղել է Խորհրդային Միության կազմում և նրանց հետ անցել բավական մեծ, ինչու չէ, նաև ուսանելի, ինչպես նաև դժվարություններով, հաճախ զրկանքներով, խոտորումներով և փորձություններով լի ճանապարհ:

Խնդիրն այն է, որ Խորհրդային Միության կառավարման համակարգն այնպիսին էր, որ Միության մեջ մտնող ժողովուրդները, հանրապետությունները ինքնուրույն չէին կարող տնօրինել իրենց ճակատագիրը, լուծել հանրապետություններում ծառացած խնդիրները, որոնք տարիների ընթացքում գնալով կուտակվում էին և առաջացնում կենտրոն-ծայրամաս, ազգային հանրապետությունների միջև հակասություններ,

ներքին դժգոհություններ և կենտրոնին հակադրվելու, նույնիսկ նրանից անջատվելու ձգտումներ, որոնց մասին բարձրաձայնել հնարավոր չէր:

Կառավարման նման համակարգը գնահատվում և որակավորվում էր որպես ամբողջատիրական, տոտալիտար համակարգ, որի ժամանակ հաճախ ոտնահարվում էին մարդ-անհատի, երբեմն նաև առանձին ժողովուրդների իրավունքները, որն էլ օրօրի ավելի էր մեծացնում անվստահությունը կենտրոնի և ծայրամասերի, Միության մեջ մտնող սուբյեկտների, երկրի ղեկավարության և միլիոնավոր զանգվածների, շարքային մարդկանց միջև, որոնցից յուրաքանչյուրը հարմար պահի պատրաստ էր դուրս գալ Միությունից և ինքնուրույն տնօրինել իր երկրի, իր ժողովրդի ճակատագիրը, նրա պատմությունը:

Հասկանալի է, որ նման քայլերը նախկինում, առավել ևս ստալինյան կառավարման տարիներին, խստորեն ճնշվում և պատժվում էին և բավական թանկ նստում ողջ ժողովրդի, այդ թվում նաև հայ ժողովրդի վրա:

Եվ որքան էլ որ 1950-ական թվականների կեսերին՝ կապված խրուշչովյան «ձնհալի» քաղաքականության, անհատի պաշտամունքի դատապարտման հետ, երկրի հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցան փոփոխություններ, որոշ աշխուժացում, դեմոկրատացման ուղղությամբ որոշ քայլեր, այնուամենայնիվ դրանք կիսատ-պռատ, հաճախ ոչ հետևողական կցկտուր քալեր էին և կարճ կյանք ունեցան: Այդ ամենն ավարտվեց 1960-ական թվականների կեսերին, երբ իշխանության եկած նոր ուժերը, Լ. Ի. Բրեժնևը և նրա շրջապատը սկսեցին հետապնդել և այն անհատներին, որոնք հաճախ կարող էին հակադրվել կուսակցության պաշտոնական գաղափարախությանը և հայտնել իրենց կարծիքը: Նման մարդկանց սկսեցին հետապնդել՝ որակելով որպես այլախոհներ: Կառավարման այդ փուլը 1960-ական թվականների կեսերից մինչև 1980-ական թվականների կեսերը հայտնի է նաև որպես լճացման, ամբողջատիրական համակարգի վերականգնման ժամանակաշրջան: Կառավարման նման համակարգը ապագա չուներ և կաշկանդում էր երկրի զարգացումը: Եվ դա էր պատճառը, որ 1980-ական թվականների կեսերին Խորհրդային Միությունում սկսեց իրականացվել պատմությանը հայտնի Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը, որով երկիրը մուտք գործեց պատմական մի նոր ժամանակաշրջան, որն էլ դարձավ շրջադարձային ոչ միայն խորհրդային ժողովուրդների, այլև, ողջ մարդկության և համաշխարհային հանրության համար:

Ի տարբերություն Խորհրդային Միության նախորդ ղեկավարների (Ն.Ս. Խրուշչով, Լ. Ի. Բրեժնև, Յու. Վ. Անդրոպով), Մ. Ս. Գորբաչովը համեմատաբար երիտասարդ սերնդի ներկայացուցիչներից էր և շատ լավ գիտակցում էր, որ շարունակել նման ձևով կառավարել երկիրը այլևս հնարավոր չէ: Նա փորձեց շտկել երկրում եղած թերությունները, արատները, փոխել նրա հասարակական- քաղաքական կյանքը և, ինչպես ինքն էր ասում, նոր շունչ, նոր մտածողություն հաղորդել սոցիալիզմին ու ողջ մարդկությանը: Սակայն վերակառուցման առաջին քայլերը ցույց տվեցին, որ քանի դեռ վերակառուցումը համարվում էր երկրի կառավարող վերնախավի գործը, քանի դեռ միլիոնավոր մարդիկ ակտիվորեն չէին ներգրավվել երկրի վերակառուցման գործին, այն ցանկալի արդյունքներ չէր կարող տալ: Անհրաժեշտ էր առաջ գնալ և իրականացնել այնպիսի քայլեր, որոնք կշոշափեին երկրի ոչ միայն տնտեսական, այլ նաև

ողջ հասարակության քաղաքական կյանքը, երկրի կառավարման համակարգը՝ իր բոլոր կողմերով:

Այդ իմաստով երկրում սկսված, արդեն օր-օրի ավելի լայն շրջանակներ ընդգրկող իրադարձությունների առանձնահատկություններից մեկն այն էր, որ կարճ ժամանակում ժողովրդական զանգվածներն իրենց քայլերով, նախաձեռնություններով սկսեցին առաջ անցնել այն գործընթացներից, միջոցառումներից, որոնք իրականացվում և ուղղորդվում էին կենտրոնի կողմից: Նույնպիսի կաշկանդող կարծրատիպերով էր առաջնորդվում նաև հանրապետության կուսակցական, կառավարական վերնախավը՝ սկսած Հայաստանի կոմկուսի Կենտկոմից, Գերագույն խորհրդից մինչև կառավարությունն ու պաշտոնատար մյուս անձինք, հատկապես հանրապետության քաղաքականությունն իրականացնող առաջին դեմքերը:

Եվ, իրոք, վերակառուցման հեղինակները՝ Մ. Ս. Գորբաչովը, նաև և նրա համախոհները մտածողությամբ, իրենց գործողություններով սկսեցին հետ մնալ իրենց իսկ հռչակած կարգախոսներով ոգևորված ժողովրդական զանգվածների գործողություններից, նախաձեռնություններից, որոնք դուրս էին եկել կենտրոնի վերահսկողությունից և արդեն հակադրվում էին Կենտրոնին՝ կոտրելով հին կարծրատիպերը, պահանջելով իրականացնել ավելի վճռորոշ քայլեր, ավելի շոշափելի գործողություններ: Եվ ինչպես պատկերավոր կասեր Մ. Ս. Գորբաչովը՝ «процесс пошел», գործընթացն սկսված էր, որը նշանակում էր, որ կանգնեցնել միլիոնավոր զանգվածներին հնարավոր չէր: Միաժամանակ դա նշանակում էր, որ գորբաչովյան վերակառուցումը, նրա առաջ քաշած կարգախոսները զգալի չափով նպաստեցին ամբողջ երկրում, միութենական բոլոր հանրապետություններում սկսված Միությունից անջատվելու, անկախացման գործընթացների արագացմանը:

Ստեղծված պայմաններում Խորհրդային Միության ղեկավարությունը առաջ քաշեց մի շարք կարգախոսներ, որոնց շարքում հատկապես կարևորվում էին արագացման կուրսը, կառավարման տնտեսական նոր մեթոդների կիրառումը, աշխատավորների սոցիալական բարեփոխումների անցկացումը, հրապարակայնությունը, ժողովրդավարությունը, անցյալի սխալներից, հատկապես ազգային հարցում թույլ տված սխալներից հրաժարվելը, երկրի զարգացման համար նոր կուրս մշակելը և այլն: Հասկանալի է, որ այդ ամենը մեծ չափով նպաստեց միութենական հանրապետություններում հասարակական-քաղաքական կյանքի ակտիվացմանը:

Այդ հարցում ճշմարտությունը նաև այն էր, որ երկրում քիչ թե շատ իրականացվող դեմոկրատացման պայմաններում թե՛ կենտրոնում և թե՛ միութենական հանրապետություններում ավելի վաղ սկսել էին գործել տարբեր կարգի ընդհատակյա կազմակերպություններ, այսպես կոչված «ոչ ֆորմալ» կազմակերպություններ, շարժումներ և այլն:

Նման կարգի կազմակերպություններ առաջացել էին նաև Խորհրդային Հայաստանում դեռևս 1960-ական թվականների կեսերին, երբ առաջին անգամ պաշտոնապես նշվում էր 1915թ. հայոց ցեղասպանության 50-ամյակը: 1965թ. ապրիլի 24-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիկական թատրունում տեղի էր ունենում հանդիսավոր նիստ, որտեղ հանրապետության ղեկավարությունը՝ ՀԿԿ Կենտկոմ, ՀԽՍՀ կառավարություն և պաշտոնատար այլ անձինք

բարձրաձայնեցին 1915թ. օսմանյան Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության մասին, որին զոհ էին գնացել 1.5 մլն. հայեր:

Այդ միջոցառմանը զուգահեռ տեղի ունեցավ ժողովրդական զանգվածների նախաձեռնած ցույցը, որի որոշ մասնակիցները «վերադարձրեք մեր հողերը» պաստառներով ներխուժեցին օպերայի դահլիճ՝ պահանջելով հանդիսավոր նիստի մասնակիցներին ընդունելու և միանալու իրենց պահանջներին:

Հանրապետության համապատասխան մարմինները ցրեցին ցույցը, իսկ նրա որոշ մասնակիցների նկատմամբ կիրառեցին ձերբակալություններ, հետապնդումներ և այլն: Իշխանությունների կողմից իրականացվող նման քայլերը ի վիճակի չէին կանխելու այն նոր մթնոլորտը, նոր մտածողության ձևավորումը, որն օր-օրի ավելի էր հասունանում, իր կողմը գրավում նորանոր մարդկանց:

Ի դեպ տողերիս հեղինակը 1965 թվականին մասնակցել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ն. Զարուբյանի հետ հանրապետության կոմերիտմիության շրջկոմների առաջին քարտուղարների հանդիպմանը, որտեղ նա մեզ բոլորիս ցույց տվեց բազմաթիվ փաստաթղթեր, ցեղասպանությունը հաստատող նկարներ, որ նա ներկայացրել էր ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին, Մ. Ա. Սուսլովին՝ հիմնավորելու Եղեռնի հուշարձանի կառուցման անհրաժեշտությունը, որն էլ անկախ տարբեր կարգի խոչընդոտներից, դժվարություններից՝ այնուամենայնիվ թույլատրվել էր:

Ինչ խոսք, դեռ տասնամյակներ էին անհրաժեշտ, որ հին կարծրատիպերը, քարացած մտածելակերպը փոխվեր, բայց կանգնեցնել սկսված նոր գործընթացները, նոր մտածելակերպը՝ հնարավոր չէր: Դրա վկայությունը հետագա տասնամյակներն էին, Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողի կառուցումը, աշխարհի ողջ հայության կողմից ամեն տարի ապրիլի 24-ին պաշտոնապես իրականացվող սգո հանդիսությունների կազմակերպումը և այլն:

Անդրադառնալով հանրապետությունում իշխանություններից գաղտնի գործող կազմակերպությունների պատմությանը՝ պետք է ասել, որ դեռևս 1966 թ. Հայաստանում գործում էր «Ազգային միաբանության կուսակցությունը» (ԱՄԿ), որի հիմնադիրը Հայկազ Խաչատրյանն էր: Իսկ կուսակցության ձևավորումը կապված էր հետևյալ փաստի հետ. 1966թ. ապրիլի 24-ին Երևանի տարբեր վայրերում մի խումբ երիտասարդներ Եղեռնի օրվա արթիվ կազմակերպում են ցույցեր, որը համապատասխան մարմինների կողմից դիտվում է որպես հասարակական կարգի խախտում, դրա պատճառով էլ նրանցից ոմանց ձերբակալում են: Ձերբակալվածները Երևանի թիվ N 1 բանտում հիմք են դնում Ազգային միաբանության կուսակցությանը, որի ղեկավարությունը, ինչպես նշվեց, ստանձնում է 48-ամյա նկարիչ Հայկազ Խաչատրյանը, որի խմբագրությամբ 1967թ. կազմվում է ԱՄԿ-ի ծրագիրը, կանոնադրությունը և երդումը: Կարճ ժամանակամիջոցում ԱՄԿ-ի հետ միավորվում են հայրենասիրական այլ խմբեր: 1967թ. կուսակցությունը ի լուր համայն հայության «Փարոս» թերթի միջոցով ազդարարում է Մայր հայրենիքում ազգային ոգու վերածննդի մասին:[1]

Երկար տարիներ, մինչև 1987 թ., ԱՄԿ-ն գործել է ընդհատակում: Իսկ արդեն 1987 թ. վերանվանվելով «Ազգային ինքնորոշում միավորում» (ԱԻՄ)՝ Պարույր

[1] Տե՛ս Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 1678, Ց1, գ. 1, թ. 8:

Հայրիկյանի, Մովսես Գորգիսյանի, Ռազմիկ Մարկոսյանի, Սուսաննա Ավագյանի, Մեխակ Գաբրիելյանի, Շահեն Հարությունյանի ղեկավարությամբ, սկսում է որդեգրել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ անկախությունը և պետականության հիմնադրումը, ազգերի ինքնորոշումը, իշխանությունների տարանջատումը, ազգային բանակի ստեղծումը և այլն[1]:

Հետաքրքիր է ասել, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), որը իրեն համարում է Ազգային Միացյալ կուսակցության (ԱՄԿ) գաղափարական ժառանգորդը և 1967-1987 թվականներին հանուն ազատ, անկախ և միացյալ Հայաստանի պայքարել ու գործել է ընդհատակում, ստեղծվել է 1989 թ. Աշոտ Նավասարդյանի հիմնադրած «Անկախության բանակ» ռազմաքաղաքական միավորման հիմքի վրա:

1990 թ. ապրիլի 2-ին Երևանում «Անկախության բանակի» ջոկատների հրամանատարներից ձևավորված հիմնադիր խորհուրդը հռչակել է Հայաստանի Հանրապետական կուսակցության ստեղծման մասին, որի գաղափարախոսության հիմքում ընկած էր Գարեգին Նժդեհի և նրա համախոհների ստեղծած Ցեղակրոնության և Տարոնականության ուսմունքը:

ՀՀԿ-ն ևս, քաղաքական այլ ուժերի հետ ներգրավվելով հայ քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում, իր ներդրումն է կատարել Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերման գործում, քաղաքական մյուս ուժերի հետ միասին կարևորելով նորանկախ Հայաստանում ժողովրդավարության, իրավական և սոցիալական պետության ստեղծման համար պայքարը[2]:

1989 թ. ապրիլի 6-ին Երևանում տեղի է ունեցել Հայաստանի Սահմանադրական իրավունքի միության (ՍԻՄ) հիմնադիր համագումարը (նախագահ Հրանտ Խաչատրյան), որն էլ ընդունել է կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը: ՍԻՄ-ի գլխավոր նպատակը ազատ, անկախ և միացյալ, իրավական, ժողովրդավարական հայոց պետության ստեղծումն էր, որի իրականացման ակտիվ մասնակցություն պետք է ցուցաբերեին լայն զանգվածները:

ՍԻՄ-ը իր նպատակներն իրականացնելու համար կարևոր էր համարում նաև հանրապետության օրենսդիր մարմնում՝ Գերագույն խորհրդում, պատգամավորության համար արժանի թեկնածուների առաջադրումը, իրենց չարդարացնող պատգամավորներին ետ կանչելու սահմանադրական կարգի հաստատումը, հայ ժողովրդի ազգային խնդիրների սահմանադրական լուծման համար պայքարը և այլն:[3]

Հանրապետության քաղաքական կյանքի ակտիվացումը դրսևորվել է նաև բնապահպանական բնույթի ցույցեր կազմակերպելով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ բնապահպանական խնդիրները հանրապետությունում ձեռք էին բերում կարևոր նշանակություն, 1987թ. հոկտեմբերի 17-ին Երևանի օպերայի հրապարակում մի խումբ ակտիվիստներ՝ Ռաֆայել Համբարձումյանը, Սամվել Գևորգյանը, Սամվել Սեդրակյանը և ուրիշներ կազմակերպում են էկոլոգիական ցույց, որը, ինչ-

[1] Տվյալները վերցված են ՀՀ արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվական միջոցների, հասարակական կազմակերպությունների գրանցման վարչությունից, կուսակցությունների մասին ըստ տարիների տված հաշվետվություններից, գործ 10, Աղյուսակ 1:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության կուսակցության ընթացիկ արխիվ, թղթապանակ № 1, 1990 թ.:

[3] Նույն տեղում, գործ 12:

պես գրում են ցույցի մասնակիցները, Խորհրդային Միությունում առաջին էկոլոգիական-քաղաքական ցույց-հանրահավաք էր, որին մասնակցում էին հազարավոր մարդիկ:[1]

Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը 1980-90-ական թվականներին՝ կապված է Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության հետ, երբ ինչպես կենտրոնում, այնպես էլ միութենական հանրապետություններում սկսեցին ձևավորվել քաղաքական նոր ուժեր, որոնք սկսեցին գլխավորել երկրում սկսված քաղաքական նոր գործընթացները: Դրանց շարքում հատկապես առանձնանում են Ղարաբաղյան շարժման հենքի վրա ձևավորված «Միացում», «Կռունկ» կազմակերպությունները, «Ղարաբաղ» կոմիտեն, որն էլ հետո սկսեց գլխավորել և իր մեջ ներառել հանրապետությունում սկսած ազատագրական շարժումը և կոչվեց «Հայոց համազգային շարժում» (ՀՀՇ):

Այդ նույն ժամանակ Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Ազգային վերածննդի կուսակցությունը, որը 1965 թ. գործել է ընդհատակում «Հայ դատ» անունով: 1968 թ. «Հայ դատ»-ը ընդհատակում հրապարակել է «Հանուն հայրենիքի» ամսագիրը, սակայն ՊԱԿ-ի կողմից հայտնաբերվել է, իսկ ղեկավարները՝ Հովիկ Վասիլյանը, Ասատուր Բաբայանը, Սարգիս Թորոսյանը և ուրիշները դատապարտվել են տարբեր տարիների ազատազրկման: Բայց դա չխանգարեց, որ ազատազրկումից վերադառնալուց հետո՝ 1987 թ. «Հայ դատ-ն» անցնի ակտիվ հասարակական-քաղաքական պայքարի՝ որդեգրելով Գարեգին Նժդեհի ցեղակրոնության գաղափարը:

1988 թ. «Հայ դատ-ը» մյուս քաղաքական ուժերի հետ սկսեց ակտիվորեն մասնակցել Արցախի վերամիավորման գործընթացին, հատկապես ստանձնելով Բերդաձորի ենթաշրջանի հայաբնակ գյուղերի պաշտպանությունը:

1991 թ. «Հայ դատ» կուսակցությունը վերանվանվեց «Ազգային վերածննդի կուսակցություն», որի առաջին համագումարում էլ կուսակցության նախագահ ընտրվեց Հովիկ Վասիլյանը[2]:

Իսկ արդեն 1980 թ.-ին վերջերին, որը նաև Խորհրդային Միության փլուզման նախաշեմն էր, քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների, անկախ արգելքներից, ձևավորման շրջանն էր, որը օր-օրի դառնում էր իրողություն, որը կանգնեցնել հնարավոր չէր:

Իսկ ինչ վերաբերում է Հայոց Համազգային շարժման կազմակերպության ձևավորմանը, դա պատահական չէր, քանի որ խոսքը վերաբերում էր Լեռնային Ղարաբաղին, պատմական Արցախին, որի մասին 1921թ. հուլիսի 5-ի ՌԿ (բ) Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը տրվել էր Ադրբեջանին՝ հիմնավորելով, որ նա տնտեսապես ավելի շատ կապված էր Ադրբեջանի հետ, քան Հայաստանի: Եվ որքան էլ հայ ժողովուրդը, արցախցին խորհրդային իշխանության տարիներին ստիպված էր հաշտվել այդ իրողության հետ, այժմ արդեն նոր պայմաններում հրապարակավ ի լուր ողջ հայության բարձրաձայնեց այդ մասին՝ պահանջելով կենտրոնական իշխանություններից, հանրապետության կուսակցական, պետա-

[1] Տե՛ս Ազգային արխիվ, Ֆ. 4516, Ցանկ, գ. 13, թ. 28:
[2] Տես՛ «Հայաստանի Հանրապետություն. Կուսակցություններ», Երևան 2002, էջ 48:

կան մարմիններից, Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդից վերանայել Կովկասյան բյուրոյի ժամանակին ընդունած անարդարացի որոշումը:

Ելնելով այն հանգամանքից, որ վերակառուցումը հնարավորություն էր տալիս խոսել նաև անցյալի սխալների մասին, բարձրացնել հարցեր, որոնք նախկինում արգելված էին, իսկ արցախցիներն էլ կազմում էին Լեռնային Ղարաբաղի այն ժամանակվա 162 հազ. բնակչության 76 %-ը կամ էլ՝ 123 հազարը, ադրբեջանցիների, քրդերի, ռուսների համեմատ, օգտվելով ազգերի ինքնորոշման մասին իրենց սահմանադրական իրավունքից՝ ցանկություն հայտնեցին միավորվելու մայր հայրենիքի հետ:

Այդ նպատակով 1987 թ. Լեռնային Ղարաբաղի գրեթե բոլոր ձեռնարկությունները, հաստատությունները, կոլեկտիվ, խորհրդային (սովխոզ) տնտեսությունները հրավիրեցին կոլեկտիվների ընդհանուր ժողովներ և ընդունեցին որոշումներ հաստատված ստորագրություններով, կնիքներով ու հատուկ պատվիրակության միջոցով հանձնել ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների բաժին և անձամբ՝ Մ. Ա. Գորբաչովին, ելնելով նաև այն հանգամանքից, որ Մ. Ս. Գորբաչովն ընդունում էր, որ կուսակցությունը նաև ազգային հարցում ժամանակին թույլ էր տվել սխալներ, և հենց վերակառուցումը կոչված էր դրանք վերանայել: Ի դեպ, ստորագրողների թիվը հասնում էր 80-հազարի, որը գործնականում կազմում էր Լեռնային Ղարաբաղի հասուն տարիքի գրեթե ամբողջ բնակչությունը՝ բացառությամբ ադրբեջանցիների:

1988 թ. փետրվարի սկզբներին Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների հինգ շրջաններից չորսում անցկացվեցին նստաշրջաններ, որոնք ընդունեցին որոշումներ՝ դուրս գալ Խորհրդային Ադրբեջանի կազմից և միանալ Խորհրդային Հայաստանին: Իսկ արդեն փետրվարի 13-ին Ստեփանակերտում տեղի է ունենում աննախադեպ մի իրադարձություն: Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի և գյուղատնտեսական տեխնիկումի ուսանողները իրենց դասախոսների ուղեկցությամբ կազմակերպեցին բազմամարդ մի հանրահավաք և անտեսելով սպառնացող վտանգը՝ ելույթներ ունեցան, որ Խորհրդային ժամանակներում անհավանական իրողություն էր, քանի որ մարդկանց մեջ դեռ անթաքույց վախ և երկյուղ կար, ինչպես նշում է ցույցի մասնակից և այն ժամանակ Ստեփանակերտի հրապարակում առաջինը ելույթ ունեցող Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ Արցախի պետական համալսարան) դասախոս Գրիշա Աֆանասյանը, որի կարծիքով 1988 թ. փետրվարի 13-ի անդրանիկ հանրահավաքը որպես նախադեպ, որպես վճռորոշ նշանակություն ունեցող հավաք՝ մարդկանց մեկ ընդհանուր գաղափարի շուրջ համախմբելու փորձ էր: Վերհիշելով այդ ամենը, նա նաև նշում է, որ այդ օրը բոլորն էլ գրեթե անվրեպ էին գործում, ոչ մի սադրանքի չենթարկվեցին և խաղաղ երթից հետո անաղմուկ ցրվեցին, իրավապահ մարմիններին միջամտելու առիթ չտվեցին[1]:

Իսկ արդեն փետրվարի 20-ին Ստեփանակերտում հրավիրված Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի արտահերթ XX նստաշրջանը ձայների բացարձակ մեծամասնությամբ (100-ն ընդդեմ 17-ի) ընդունեց որոշում՝ դուրս գալ Խորհրդային Ադրբեջանի կազմից և միանալ Խորհրդային Հայաստանին, դիմել Խորհրդային Հա-

[1] Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն», 13 փետրվարի, 2015:

յաստանի, Խորհրդային Ադրբեջանի Գերագույն խորհուրդներին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին իր օրինական որոշումը վավերացնելու խնդրանքով:

Փետրվարի 21-ին Մարզային խորհրդի որոշումը հրապարակվեց «Խորհրդային Ղարաբաղ» թերթում հայերեն և ռուսերեն լեզուներով[1]:

Ի դեպ այդ իրադարձությունները կարծես դարձան խթանող գործոն, որ Երևանում, ամբողջ հանրապետությունում սկսվի քաղաքական կյանքի աշխուժացման մի նոր փուլ: Հենց նույն օրն էլ Երևանում տեղի ունեցան բազմամարդ հանրահավաքներ, որոնցում ցուցարարները պաշտպանում էին Լեռնային Ղարաբաղի աշխատավորների որոշումը, միաժամանակ հայրենի իշխանություններից պահանջում հրավիրել Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան՝ քննարկելով այդ հարցերը, որ, ցավոք, իշխանությունների կողմից անտեսվում էին[2]: Խնդիրն այն էր, որ վերակառուցման քաղաքականության գաղափարներից ոգևորված հայ ժողովուրդը ևս, միութենական մյուս հանրապետությունների նման, բարձրացրեցին հուզող սխալների, անարդարությունների խնդիրը, որ խորհրդային իշխանությունները կատարել էին անցյալում:

Ստեղծված իրավիճակում Խորհրդային Միության ղեկավարությունը առաջ քաշեց մի շարք կարգախոսներ, որոնց նպատակն էր միլիոնավոր մարդկանց ուղղել երկրի առջև ծառացած խնդիրների լուծմանը: Այդ իմաստով երկրում սկսված նոր վերափոխումներում հատկապես կարևոր դեր խաղացին ԽՍՀՄ ժողովուրդների ժողովրդական պատգամավորների 1-3-րդ համագումարները:

1989թ. մայիս-հունիսին հրավիրված առաջին համագումարում առաջին անգամ ձևավորվեց միջռեգիոնալ պատգամավորական խումբ՝ Ա. Դ. Սախարովի , Բ. Ն. Ելցինի, Գ. Ի. Պոպովի, Յու. Ա. Աֆանասևի, Ա. Ա. Սոբչակի և մի շարք այլ պատգամավորների մասնակցությամբ: Դա փաստորեն պատգամավորների փոքրամասնությունից կազմված ոչ ֆորմալ առաջին ընդդիմադիր խումբն էր, որ սկսեց պայքարել կուսակցական նոմենկլատուրայի դեմ՝ ստանալով ժողովրդի աջակցությունը: Նրանց ծրագրային նպատակներն էին՝ ազատությունը, մասնավոր սեփականության հաստատումը, իշխանության ապակենտրոնացումը, միութենական հանրապետությունների իրական տնտեսական և տնտեսվարական ինքնուրույնության հասնելը և այլն:

Իսկ արդեն Միության ժողովրդական պատգամավորների 2-րդ համագումարում (1989թ. աշուն) խնդիր դրվեց վերանայել ԽՍՀՄ Սահմանադրության (1977թ.) 6-րդ հոդվածը, որը վերաբերում էր Խորհրդային Միության ղեկավար և ուղղություն տվող ուժին՝ երկիրը միանձնյա ղեկավարող Կոմունիստական կուսակցությանը: 1990 թ. մարտին հրավիրված ժողովրդական պատգամավորների 3-րդ համագումարը ի վերջո ընդունեց որոշում ԽՍՀՄ Սահմանադրության վերը նշված 6-րդ հոդվածը հանել[3]:

Նման որոշումը հանգեցրեց Խորհրդային Միության քաղաքական-տնտեսական ամբողջ համակարգի փլուզմանը: Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության ներսում առաջացան նոր ֆրակցիաներ, իսկ միութենական հանրապետու-

---

[1] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1450, ց.1, գ.4, թ.8:

[2] Տե՛ս Հայաստանի ազգային ակտիվ, ֆ. 1678, ց.1.գ. 21.թ. 46-47:

[3] Տե՛ս Джузеппе Бофа, От СССР к России. М., 1996. с175; Всемирная история новешего времени. Минск, 1998., с 103; Г. И. Герасимов. История современной России: поиск и обретение свободы (1985-2008). М., 2008. с 46-48:

թյունների կոմունիստական կուսակցությունները սկսեցին դուրս գալ ԽՄԿԿ-ից, այդ թվում նաև Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը հետագայում պառակտվեց և կորցրեց իր նախկին դիրքերը:

Չնայած 1990թ. կեսերին հրավիրվեց ԽՄԿԿ XXVIII համագումարը, որը ընդունեց երկիրը ճգնաժամից հանելու վերաբերյալ բազմաթիվ որոշումներ, հատկապես պետության վերահսկողությունից դուրս շուկայական հարաբերություններին անցնելու մասին և այլն, այնուամենայնիվ դրանք որևէ չափով չփոխեցին երկրի վիճակը:

ԽՍՀՄ-ը շարունակում էր մնալ խոր ճգնաժամի մեջ, իսկ կուսակցության հեղինակությունը օր-օրի անկում էր ապրում: Դրա դրսևորումներից մեկը զանգվածաբար կուսակցության շարքերի նոսրացումն էր, մարդիկ դուրս էին գալիս կուսակցությունից և ընդունվում նոր կազմակերպվող կուսակցությունների մեջ:

Փաստորեն գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը ավելի շուտ վեր հանեց գործող խորհրդային համակարգի արատները, նրա թերությունները, որոնք էլ ավելի մեծ չափերով նպաստեցին նրա փլուզմանը:

Դա նշանակում է, որ Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը աստիճանաբար «վերևների» հեղափոխությունից դառնում էր միլիոնների գործը:

Ներկայացնելով և գնահատելով տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական գործընթացները, միլիոնավոր մարդկանց նոր մտածողությունն ու տրամադրությունները, երկրում իշխող նոր մթնոլորտը՝ ակադեմիկոս Բ. Ն. Տոպորնին այդ օրերի մասին գրում է. «Խորհրդային Միությունը այն ձևով, որով նա ձևավորվել էր նախորդ տասնամյակների ընթացքում, չէր բավարարում նրա մեջ մտնող հանրապետություններին: Ձևավորվել էր միմյանց հակադրվելու յուրօրինակ մի ստերեոտիպ (կարծրատիպ), մի անփոփոխ շաբլոն, երբ Միությունը չէր դիտվում որպես նրա մեջ մտնող բաղկացուցիչ մասերը՝ հանրապետությունները, միավորող, ինտեգրող և նրանց շահերն արտահայտող մարմին, այլ ավելի շատ դիտվում էր ինչ-որ օտար մի ուժ, որը կտրված էր նրա սուբյեկտներից իր անչափ կենտրոնացված, մեծ բյուրոկրատական ապարատով»[1]:

Այդ իմաստով, թերևս, գորբոչովյան վերակառուցման քաղաքականության ամենադրվատելի կողմերից մեկն այն էր, որ երկրով մեկ սկսեցին ձևավորվել քաղաքական նոր ուժեր, նոր կուսակցություններ, խմբավորումներ և այլն: Ժողովրդական զանգվածների շրջանում սկսվող նոր շարժումը իրականում հակադրվում էր կառավարող կոմունիստական կուսակցությանը, նրա գաղափարախոսությանը: Իսկ դա նշանակում էր, որ երկրում ստեղծված նոր մթնոլորտը հնարավորություն էր տալիս մարդկանց նույնիսկ զանգվածային ձևով պայքար ծավալել կառավարող ամբողջատիրական համակարգի դեմ՝ նպատակ ունենալով երկրում, նրա յուրաքանչյուր մասում՝ կենտրոն թե ծայրամաս, հաստատել ժողովրդավարական կարգեր, որտեղ չեն ոտնահարվի մարդու, անհատի իրավունքները, արժանապատվությունը:

Միաժամանակ իրականություն էր նաև այն, որ նման քարոզչությունը ամեն քայլափոխի հանդիպում էր կառավարվող ուժերի, երկրի բյուրոկրատական ապարատի

[1] Տե՛ս Топорнин Б. Н. Новый Союзный договор: теоретические подходы. Трудные поиски решений. М. , 1990 с. 9 (Վերցված է Г. Г. Шинкарецкая. Содружество независимых государств (правовые основы деятельности)) М., 2006.

դիմադրությանը, խոչընդոտներին և հետապնդումներին: Սակայն ճշմարտություն էր ժողովրդական զանգվածների արթնացումը. քաղաքական ակտիվությունը կանգնեցնել այլևս հնարավոր չէր: Ուստի կարևոր էր դառնում երկրում սկսված վերափոխումները, կենտրոն-ծայրամաս հարաբերությունները այնպես կազմակերպել, որ դրանք ընթանային առանց մեծ ցնցումների, տարբեր ուժերի բախումների: Սակայն, ցավոք, դեպքերն ընթացան այլ հունով, առանձին տեղեր դրանք վերածվեցին ազգամիջյան բախումների, նույնիսկ՝ պատերազմների:

1988թ. փետրվարի 27-29-ին Ադրբեջանի ինտերնացիոնալ քաղաք համարվող Սումգայիթ քաղաքում կենտրոնի թողտվության պայմաններում Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպվեցին հայ բնակչության ջարդեր, որոնց զոհ գնացին տասնյակ անմեղ մարդիկ, իսկ հարյուրավորները, հազարավորները դարձան վիրավորներ, փախստականներ: Ազգամիջյան ընդհարումների, հակասությունների հողի վրա նույնպիսի իրադարձություններ տեղի ունեցան նաև Թբիլիսիում՝ 1989 թ., ինչպես նաև Ֆերգանայում, Նոր Ուզենում (Ղազախստան), Քիշինևում, Սուխումիում և այլուր[1]:

Նման իրադարձությունները դարձան այն գլխավոր պատճառներից մեկը, որ ավելի խորացրին Միությունից անջատվելու և սեփական, ինքնուրույն կյանքով ապրելու ձգտումը: Երկրում սկսվեց այսպես կոչված «անկախության շքերթը», երբ մեկը մյուսի ետևից տարբեր հանրապետություններ սկսեցին բարձրաձայնել իրենց անկախացման մասին: Առաջիններից էին Մերձբալթյան միութենական հանրապետությունները՝ Էստոնիա՝ 1988 թ. նոյեմբերի 16, Լիտվա՝ 1989 թ. մայիսի 15, Լատվիա՝ 1989 թ. հուլիսի 28:

Ի դեպ այդ հռչակագրերում Մերձբալթյան հանրապետությունները հայտարարում էին, որ իրենք բուրժուական հանրապետությունների շարունակողներն են, որը հաստատվել են իրենց տերիտորիաներում մինչև խորհրդային կարգերի հաստատումը: Խորհրդային կարգերը Մերձբալթիկայում հաստատվել էին 1940 թ. օգոստոսի 3-6-ը ընկած ժամանակաշրջանում, որն արդյունք էր 1939 թ. օգոստոսի 23-ին Ստալին-Հիտլեր հայտնի «Ռիբենտրոպ-Մոլոտով չհարձակման պակտ» անունով, որով նաև Արևելյան Եվրոպան բաժանվում էր երկու երկրների՝ ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև որպես ազդեցության գոտի, որի ճակատագրին արժանացան նաև Արևմտյան Ուկրաինան, Արևմտյան Բելոռուսիան, Բեսարաբիան, որը Բուկովինայի հետ միասին ձևավորվեց որպես Մոլդովիայի միութենական հանրապետություն:

Ի դեպ ըստ այդ գաղտնի պայմանագրի Ֆինլանդիան ևս ԽՍՀՄ ազդեցության գոտի էր, որտեղ, սակայն, նույն սցենարը իրականացնել չհաջողվեց: Այդ միացումներով Խորհրդային Միության տարածքն ավելացավ 196 հազ. քմ. կմ.–ով, իսկ բնակչությունը՝ 13 մլն-ով[2]:

Եվ երբ 1991 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 5-րդ համագումարը ճանաչեց Մերձբալթյան հանրապետությունների անկախությունը[3],

---

[1] Տե՛ս Всемирная история новешего времени, Минск 1998., էջ 103, 105:

[2] Տե՛ս История новешего времени стран Ежропы и Америки 1918-1945 (под. ред. Е. Ф. Язькова), М., 1989, էջ 359-360; А. Ю. Дворниченко, Ю. В. Тот. М. , В. Ходьяков, История России, М., 2008, էջ 362-365; Г. Г. Шинкарецкая, Содружество независимых государств (правовые основыдеятельности), М., 2006:

[3] Տե՛ս Всемирная история новешего времени (Справочное пособые), Минск 1988, էջ 107:

մյուս հանրապետությունները ևս սկսեցին հայտարարել իրենց անկախության մասին: Խորհրդային Հայաստանի պայմաններում անկախության համար պայքարն ուներ իր առանձնահատկությունները, իր նրբություններն ու նախապատմությունը, որոնց շարքում հատկապես առանձնանում էր Ղարաբաղյան հիմնախնդիրը և շարժումը:

Սկիզբ դրվեց հայոց Երրորդ Հանրապետության պատմությանը, որը կանգնած էր նոր մարտահրավերների, նոր փորձությունների և դժվարությունների առջև, որոնց հաղթահարումը և նոր կյանք կառուցելը պետք է դառնար հայ ժողովրդի, նրա բոլոր հատվածների սրբազան գործը:

Генрих Абрамян, **Независимость Республики Армения и первые шаги активизации общественно-политической жизни республики в 1980-ых – начале 1990-ых, -** В статье показаны те процессы, которые произошли в СССР во время горбачевской перестройки. Перестройка одновременно выявила неконкуретоспособность советской политической, экономической системы. Вместе с тем она способствовала активизации общественно политической жизни республик, которые боролись за независимость. В Армении эта борьба связана с оброзованием подпольных и неформальных организаций, с Карабахским движением и приобретением независимости.

Henrik Abrahamyan, Independence of the Republic of Armenia and the First Steps of Activity of Socio-Political Life of the Republic in 1980s-early 1990s, - The article discusses Gorbachev's restructuring processes in the USSR. Reconstructing revealed the competitiveness of both the Soviet political and economic system. Alongside with this, it fostered the activation of the social-political life in the republics of the Soviet Union fighting for independence. The struggle in Armenia is associated with the formation of the underground and informal organizations, Karabakh movement and gaining independence.

Հենրիկ Աբրահամյան – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: